ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5612-Ա « 18 » նոյեմբերի 2026թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
18.11.2026թ.
հ. 5612-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Կարեն Սահրադյան /լիազորված անձ/ Լիլիթ Բուդաղյան	Մալաթիա-Սեբաստիա	հողամաս	Լիլիթ Բուդաղյանին սեփականության իրավունքով պատկանող, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գտնվող հողամասին /վկ. հ.25062026-01-0491 և Երևանի քաղաքապետի 09.11.2026թ. հ.5453-Ա որոշում/ տրամադրել հասցե՝ Հաղթանակ թաղամաս, 2-րդ փողոց, հ.69	01073SXZGMH6	
2	Արմեն Խոդակ /լիազորված անձ/ Լյուդմիլա Խոդակ	Կամոյի 3-րդ փակուղի, հ.8	բնակելի տուն	Ըստ օրենքի ժառանգության իրավունքի 21.06.2003թ. հ.9907 վկայագրով, Լյուդմիլա Խոդակին փոխանցված ժառանգական գույքին՝ Կամոյի 3-րդ փակուղու հ.8 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Զաքարիա Քանաքեռցու փողոց, 3-րդ փակուղի, հ.8/1	01123DRRJGHR	
3	Մարատ Մովսիսյան	Լեոյի փողոց, հ.6 շենք, հ.2	բնակարան	Մարատ Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող, Լեոյի փողոցի հ.6 շենքի հ.2 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.10092025-01-0216, ընդհ. բաժն. 3.8քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 93.70քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Լեոյի փողոց, հ.6 շենք, բն.2/1	01063BQLSSLV	
4	Հայկ Խաչատրյան /լիազորված անձ/ Աշոտ, Լուսիկ և Լուսինե Խաչատրյաններ	Օ. Համբարձումյան փողոց, հ.24	հողամաս	Աշոտ, Լուսիկ և Լուսինե Խաչատրյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Օ. Համբարձումյան փողոցի հ.24 հասցեում գտնվող հողամասի /վկ. հ.09112026-01-0308/ բաժանման հատակագծով առանձնացվող 113.8քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Օ. Համբարձումյան փողոց, հ.24/3	01043T4L7ZAF	

5	Հայկ Խաչատրյան /լիազորված անձ/ Աշոտ, Լուսիկ և Լուսինե Խաչատրյաններ	Ո. Համբարձումյան փողոց, հ.24	հողամաս	Աշոտ, Լուսիկ և Լուսինե Խաչատրյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Ո. Համբարձումյան փողոցի հ.24 հասցեում գտնվող հողամասի /վկ. հ.09112026-01-0308/ բաժանման հատակագծով առանձնացվող 105.5քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Ո. Համբարձումյան փողոց, հ.24/2	01043A3KAFSW	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**